

ԱՐԵՎԱՆՈՅՍ ԱՐԱՐԱՏԵԱՆ

ՀԱՏԸ ԿՍԵՒԱԼԻԲ

ԿԸ ՀՐԵՏԵՐԵՎՈՐԻ ԶՈՐԵՔԵՐԸ ԵՒ ԵՐԵՎԱՆԻ ՕՐԵՐԸ

ՀԱՏԸ ԿՍԵՒԱԼԻԲ

Յ. Գ. ՍԱՐԳՍԻԱՆ		Տ Ա Ր Ե Դ Ի Ն Կ Ա Ն Ի Ի Կ		Ե Ա Ն ՈՒ Տ Ա Գ Ի Ն		Չ. Բ. ՊԱՐԱՔԵՐԵԱՆ	
Համարատու — Տնօրեն		ԻԶՄԻՐ	Օսմ. ոսկի 1	3	զրուշ արդը ՄԷԿ ԱՆԳԱՄ	Հիմնադիր	
		ԴՈՒՐԱՐ	Մէճիտիկ 6	2	զրուշ ԵՐԱՌԻ ԱՆԳԱՄ		
		ՕՏԱՐ ԵՐԿԻՐ	Ձրանք 23	60	փարա ԵՐԵՎԱՆ ԱՆԳԱՄ		

Ա. Կ. ԱՂԱԶՄԱՆ, Կը տնօրինէ բաժանորդագրութեան եւ ծանուցման վե-
րաբերակ բոլոր գործերը: Ծիշէ՛ցիկը հաստէսի Ձիւղըրարա Թէրխանէ

Որ եւ է գրութիւն, յօդուած կամ նամակ, որ ուղղակի ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ
կը վերաբերի, տնօրէնին կը ղրկուի: Անվի խան Թիւ 17

ԻԶՄԻՐ ԵՐԱՌԻ, 8/20 ԳԵՂՏԵՄ 1884

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Մ Ա Ր Ո Ք

ԵՆԻՐՈՊԱԿՈՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Ի ԹԱՆԿԻՐ

Միջերկրականի վրայ գտնուած՝
Ափրիկէի մասնատուական երկիր-
ներէն ամենէն խորհրդաւորը
Մարոքն է, որ թէեւ միմիայն
13 հազարամէթր լայնութեամբ
նեղուցով մը կը զատուի Երու-
սալէն: Բայց կարելի է ըսել թէ
ինչ որ է Միսաւտան նոյնն է նաեւ
Մարոքը. ըստորում՝ Երուսալեան
տէքսթիլներու ներկայացու-
ցիները չէ թէ ի Ֆէս կը ընկնին,
որ երկրին մայրաքաղաքն է,
այլ ծովափերէն քաղաք մը՝ այն
է Թանժերը. ուստի ինչ խնդիր,
պատասխան եւ յայտարարութիւն
որ ունենան՝ կուտարութեան հա-
զարակէ, միշտ բարձրատիկան
անձի մը միջոցաւ կը հաղորդեն
զայն: Թանժերէն Ֆէս երթալ
գիւրքին բան չէ ըստորում 8—10
օր պէտք է այնպիսի երկրի մը
մէջ ուր ճամբայներ կը պահպանեն:

Այս ծածկախորհուրդ երկիրը
որքան ալ ըստ երկայնքի հաս-
գարտ երկի՝ երբ եղիպտոս, ձէ-
ղայիր, Թանժերը լռեն, Երուսալ
կը կարծէ թէ բան մը կ'ըստ
անդ զոր ոչ ոք գիտէ: Ու եթէ
ոմանք, բան մը չկայ ըսեն, ու
մանք ալ հակառակը կը պնդեն,
ուստի քիչէն պարբերական թեր-
թեր յուզում մը կը ծանուցանեն
եւ մինչեւ անգամ ուր ուրեմն
լուր կ'տան թէ այս ինչ կուտ-
արութեան ներկայացուցիչը մե-
ծադին բնծայելով Մարոք
զայցի է Սուլթանին ներկայա-
նաւ, կամ թէ այս ինչ կուտ-
արութեան հայտարարութեան
գէտ բունարարութիւն մը ի գործ
դրուել է, ինչ ինչ բանակցու-
թեանց տեղի առել է եւ այն:
Այսպիսի բանակցութիւններու
մէջ օտար տէրութեանց միւս
ներկայացուցիչները չեն կրնար
բոլորովին անտարբեր մնալ, ըստ
որում զեռպանագէտ մը իրեն
սկզբունք ունի թէ իւր առաջին
պարտաւորութիւնն է գտնել
խնդիրներ որ իւր անձին վրայ
խօսեցնել տան, իսկ երկրորդ
պարտաւորութիւնն է արգիլել
ուրիշները որ այդպիսի խնդիր-
ներ ունենան:

Ծայրագոյն արեւմտի մէջ ինչ
որ ալ պատահէ իւրեղէն եւրոպա,
բայց ամենէն շատ Մարոքի ջրե-
րուն մէջ զաղղիական նաւա-
խումբ մը յուզեց զայն. եւ այս
յուզում մինչեւ անգամ տէրու-
թեանց խորհրդարաններու մէջ
արձագանք դուռ, եւ գերմա-
նացի հռչակաւոր ճամբորդ մը
Կաղէթ Թը Դուրսի մէջ երկու ա-
միս առաջ գրեց թէ, ինչ որ ալ
կուզեն թող ըսեն՝ կայ Մարոք-
ական խնդիր մը, զոր թէեւ կ'ու-
զեն ծածկել, սքողել, բայց

շատ տոնն չբարձր դիմանայ
այս: Բարեբաղդաբար գործե-
րը թէեւ ի Մարոք յոռի վի-
ճակ մը ունին, սակայն տակա-
ւին երկար առեւն պիտի դիմա-
նան:

Մարոքի պետութիւնը բոլոր
Արեւմտեան կայսրութիւնէն ա-
ւելի բնդարձակ է, բայց այն
ամեն ճամբորդները որ հոն այ-
ցելած են՝ միտածոյն ցաւ կայտ-
նեն յոռի վարչութեան եւ կա-
ռավարութեան դէմանդ: Մա-
րոք՝ ձէղայիրի, Թանժերի եւ
Թարապուլուսի վրայ ուս առա-
ւելութիւնը ունի՝ զի թէ Միջեր-
կրականի եւ թէ Ովկիանոսի վրայ
նաւահանգիստներ ունի, եւ թէ
իւր մէջ Ատլանտի ամենէն բարձր
գագաթները պարունակելով՝
հոսուն ջուրեր ունի միշտ, եւ
իւր գետերուն ու վտակներուն
թիւը երբեք չ'նուազիր: Ամեն
տեղ առողջ կլիմայ մը եւ բերրի
երկիր մը կը տարածի հոն, ուր
թէ արմատի եւ թէ արմաւենիք
կրնան մշակուիլ: Կը հաւատան
թէ լեռները առատ հանքեր կը
պարունակեն, ճարտարութեանց
մասին գաղով՝ մարդբայինքը
յաջողակ են գորգ, կաշի եւ պը-
նակեղէն շինելու մէջ: Գիտենք
արդէն թէ իրենց նախնիքը որ-
քան ճարտար էին ճարտարա-
պետութեան եւ ջրանցիներու շի-
նութեան մէջ, բայց այժմ ա-
նոնցմէ մնացածը վայելելով կը
բուսականանան, ըստորում՝ ար-
դէն կ'ստանան ալ պաշտօն
փոխ չեն տանիր, վրայ այն
պայտանքը որ վիշելու վրայ են,
եւ այն ջրանցիները որ հետզհետէ
կ'աւելին:

Մարոքը բնականայէն այն-
քան հարուստ է զի՝ այն մասե-
րուն մէջ, ուր կառավարութեան
օրումը ազդեցութիւնն ազատ
մնացած է, բարգաւաճութիւն
եւ երջանկութիւն կը տեսնուի:
Արդարեւ Ատլանտի ամենէն
կը գտնուին այնպիսի ձորեր, որ
բոլորովին մշակուած հողերով եւ
պարտեզներով ծածկուած են,
որոնց մէջ տեղ տեղ հարուստ
գիւղեր օտէպ խիտ առ խիտ կը
տեսնուին: Սակայն այս գիւղերը
բնակող ցեղերը գրեթէ անկաս-
ն են, եւ իրենց կառավարութեան
մէջ տեսնուի մը ուսով վարական
է, ըստ Գուրանի չափաւորաւ
կան ցեղեր ալ, որ ժառանգա-
կան ցեղի մ'ունին, եւ ամեն
տարի Սուլթանին 4—5 հարիւր
Ֆրանքի արժողութեամբ բնծայ
մը կը ղրկեն ի նշան յարգանաց:
Այս է իրենց բոլոր հարաւորու-
թիւնը, վասն զի ոչ դատաւոր
կ'ընդունին, ոչ ալ զինոր, ոչ
աւուրք կը վճարեն, ոչ ալ ուրիշ
մը զիրենց կը կառավարէ, եւ ա-
հա այս է գլխաւոր պարտք իրենց
բարեբաւարութեան պատճառը:

Մինչ քնդհակառակն Ֆէսի կա-
ռավարութիւնը այնքան հակա-
ռակ է յառաջագիւղութեան զի՝
ուր որ իւր լուծը տարածի, կար-
ծես պարտաւորութիւն կը հա-

մարի արուեստներն եւ երկրա-
գործութիւնը հարուածել: Այս-
պէս հին նախադարձան մը
հետեւելով՝ երբ կ'արգիլէ արմը-
տեպ արտածութիւնը, բնակա-
նաբար ժողովուրդը կ'աշխատի
արտադրել այնքան արժուիք
եւ բերք որքան կարելոր է
իւր անհատական անդեան հա-
մար, վասն զի երբ իւր արտա-
գործութիւնն իւր անդեան հա-
մար պէտք եղած մասին աւե-
լորդը չը կրնար վաճառել Երու-
սալի մէջ աւելի արտադրել
յիմարութիւնն է, իսկ հարաւա-
յին գաւառներու մէջ՝ հողա-
գործութեան գլխաւոր արդեւն
աւաղակութիւնն է: Երբեք հա-
րուստ եւ բազմամարդ գաւառ-
ներ՝ այսօր անբնակ դարձած են,
վասն զի չարագործայ խումբեր
արձակ համարձակ կը գործեն
անդ: Այն հովիւներն որ իրենց
հօտերը կ'արածեն անդ՝ ակըն-
գէտ իրենց շուրջը կը գիտեն
հրացան ի ձեռին, եւ կարավա-
ններն երբ միեւնոյն վայրերէն անդ-
նին՝ սպառապառ կը զինուին:
Այն գաւառներն որ աւաղակնե-
րէ վերմ են՝ ոչ հաղորդակցու-
թեան ճամբաներ կան, ոչ ալ
կամուրջներ, ուստի վաճառա-
կանութիւնը բոլորովին տարտա-
միճակի մը մէջ կը գտնուի աստ
եւս:

Այս ամեն ակեանքներն կը միա-
նան յոռի օրէնսդրութեան մը
յուսմով բերած զեղծումները:
Դատաւորները դատաւարներուն
առատաձեւութեան շնորհիւ
կ'ապրեն, եւ ինչպէս այս պաշ-
տեանները նոյնպէս եւ Եփեսոսը
կամ կառավարիչները, ու քա-
տաւարները կամ Եփեսոսը բը-
նա թոյլակ չեն բնդուել իւր
իրենք իրենց ձեռքով կը վճար-
ուին: Աստու շահու ամենէն մեծ
աղբիւրը՝ տրոյք բաշխման մէջ կը
կայանայ, վասն զի հարկատու-
ներէն՝ զանձին վճարելի գումա-
րէն շատ աւելի մեծ գումար մը
կը պահանջեն: Ասոր համար, այս
երկրին մէջ մարդ պէտք է որ
ինքնինքն աղքատ ցուցնէ, եթէ
չուզեր անթոյլակ եւ անպատկառ
հարկապահանջներէ կողմատուիլ:

Մի միայն Սուլթանը կրնայ ի
ցոյց հանել իւր հարստութիւնը՝
անպատիւ: Տէրութեան զանձն
իւր անձնական գանձն է, եւ այս
ալ միշտ լեցուն է: Եւ տարեկան
12—13 միլիոն ֆրանքի հասոյթ
ունի, եւ այս գումարին կէսը հա-
զիւ հող կը ծախուի, բայց ոչ
թէ հանրային գործոց եւ շինու-
թեանց, այլ միմիայն Սուլթան-
նին անձնական պիտոյնց համար:
Իսկ հասոյթի այն մասը զոր Սուլ-
թանն ամեն տարի կը ընտելէ Մի-
նա կոչուած նշանաւոր նկուղին
մէջ կը պահուի, զոր ըստ ա-
ռասպելի 300 խալիվի գիւղեր
ցարեք կը պահպանեն, եւ չեն
կրնար կենդանի դուրս ելնել
անկէ: Սակայն աւելի հաւանա-
կանը այն է, ինչպէս օմանք կը
պնդեն, զի միեւնոյն խնայողու-

թեանց արդիւնքը Թափիլէթ
ովստիսին մէջ կը պահուի, որ
ներկայ Սուլթանին հայրենիքն է:
Սակայն Մարոքի ամենէն մեծ
աղէտը կրօնամարտիւնն է, որ
եւ ոչ մի երկիր այնքան յիմա-
րութեանց եւ տառապանք տե-
ղի կուտայ՝ որքան աստ: Զկայ
տեղ մը ուր հրէայն ասկէ աւե-
լի խեղճ, հալածեալ եւ չարա-
բեւայ պարի թէեւ եւ այնպէս 80
հազար իսրայէլացի կը գտնուին
այսօր, որոնց ձեռքն է բոլոր-
վին երկրին վաճառականութիւնը
եւ որոնք թէեւ կը յաջողին ստեպ
մեծ հարստութեան մը տէր լի-
նել, ինչպէս կը վկայեն իրենց
բնակարաններու եւ զգեստներու
չընդունելը, եւ երբեք իսկ
չորս պատի մէջ կատարուած կրօ-
նական հանգանքներու փայլը՝ բայց
երբ իրենց յատուկ թաղերու
նուրբ գոհններէն գուրս ելնեն,
ամեն թշնամանաց եւ հալածա-
նաց յանձնառու կը լինին: Թէ-
էրիկ եւ թէ կնիկ մարդիկ՝ ա-
մենք ալ ստիպուած են զլսի-
կոր քայլել բազիկ ոտքով, եւ
մեծակներն իրենց թեւին տակ
բաժնել: 1880ին յունվարի 16ին
հրէայ մը բնիկի մը հետ կուռի
բռնուելուն համար ողջ ողջ այ-
րեցին նոյն իսկ Ֆէսի մէջ, իրաւ
է որ Մարտիանայի այն ոստա-
նիկները, որոնք մեծ քաղաքնե-
րու մէջ իրենց աշխատութեամբ
կ'հարստանան՝ աւելի քաղցրաբա-
րոյ են, բայց երբ օրիցէ պաշտ-
պանութիւն մը ցոյց տան ույս-
պիսի խեղճերու համար, անմի-
ջապէս ի զղուշութիւն կը հրա-
ւիրուին այն միաբանական ուր-
տերու անդամներէն, որոնք փո-
ղցիները կը լլստան, եւ որոնց մէջ
ամենէն սակալին Մէնի—Միսնին
են: Ափրիկէի գեղածիմալ եւ
սքանչելի երկիրները, որոնք բնու-
թեանը իւր ամեն շնորհներն պար-
գեւած է, եւ ուր վայրագ կրօ-
նամարտիւն մը կը տիրէ յիշե-
ցնել կուտան՝ այն ջինջ եւ երկ-
նաթիղ լիճերը, ուր կ'սիրդի-
ւորեն կը ընկան:

Սակայն Մարոքի Սուլթանը
իւր հպարտականութիւնն աւելի լու-
նաւորեալ է: Մահմետի աղջիկը՝
Փաթիմէի սերունդէն է այն, եւ
սկզբմամբ բոլոր ժողովուրդեան
միահնաման տէրը: Ներկայ Սուլ-
թանին հայրը թէեւ ուղեց թէ
հրէից ինչ ինչ ազատութիւններ
շնորհել, եւ թէ կանոնաւոր զօ-
րաց բանակ մը հաստատել՝ եւս
բոզալցի պաշտօնականներու յան-
ձնելով անոնց կրթութիւնը, եւ
մինչեւ անգամ իւր պաշտօնայ-
նեցնել անոնց որոնք հակառակե-
ցան իւր խորհուրդներուն՝ գրու-
թը կտրել տուաւ, բայց եւ այն-
պէս չ'յաջողեցաւ ժողովուրդեան
բնդդիմութեան պատճառաւ:
Սակայն իւր որդին ինչ ինչ
բարեփոխութիւններու մէջ աւելի
յաջողակ գտնուեցաւ: Եւրո-
պայէն ուսուցանող պաշտօնակալ-
ներ բերել տուաւ: մի քանի անգ-
ղիացի դրամատիկներու արաւ-

նութիւն չնորհեց Ատլանտի ամիւր
հանքերը բանեցնելու, եւ կը հա-
ւատեն թէ անոնք որ 20 տարի
առաջ տեսած են Թանժերէն այժմ
չեն կրնար վերադառնալ զայն ճա-
նել, թէեւ տակաւին ունի ինչ
ինչ գործադրելի գովիլի խոր-
հուրդներ եւ փափայներ, բայց
զլսաւորաբար պարտաւոր ունի
նախնիքի մեքենայութիւններէն
կը պահանջ: Անգամ մը զինքը
թուաւորելու փորձ փորձեցին:
Ասկէ գատ եթէ վար ինչաւելի
մտերմանալ ուզէ եւրոպացւոց
հետ՝ թերեւ իրեն բուռի թէ
ինքն ալ օտարական մ'է ըստ որ-
ում ներկայ տիրող ցեղը Ֆիլալի-
ցիք կը կազմէ, որ Թափիլէթ
ովստիսին եկած եւ իշխանութիւ-
նը իւր օրինաւոր ժառանգորդ-
ներու ձեռքէն յափշտակած է:
Ուստի երկրին մէջ՝ Սուլթան
Մուլա—Մէհմետ ինչպէս իրեն
հակառակորդներ նոյնպէս եւ իշ-
խանութեան ցանկացողներ շատ
ունի, որոնք զինքը գահնկէց
ընելու համար մեծ միջոցներու
չեն կարօտի: Մուլա—Մէհմետ
գեղադէմ երկտասարդ մ'է կըս-
ուի, բայց իւր դիմաց գծերուն
վրայ կը նշմարուի այնպիսի արեւ-
րութիւն մը, որու պատճառ
թերեւ իւր անձկայի վիճակը լինի:

Սակայն այս ամեն գծաւորու-
թիւններու եւ մտաւորութիւն-
ներու մէջ՝ Մարոքի կայսրը այն-
պիսի ուրախութիւն մը ունի որ
ըստ իրեն բաւական դոհա-
ցուցիչ է: Այս ուրախութիւնը
կը կազմէ՝ եւրոպական երեք տէ-
րութիւններու այն փոխադարձ
նախանձը, որ բնականաբար թէ իւր
իրաւունքը, թէ իւր ապահովու-
թիւնը, եւ թէ իւր պետութեան
պահպանութիւնը կը խախտուին:

Այս տէրութիւններէն առա-
ջինն է Անգլիան, որ ծիպրալթա-
րով մերձակայ դրացի մը եղած
է Մարոքի ժամանակ մը Թան-
ժերի ալ կը պիտի, զայն կ'ամ-
րացնէ, բայց ինչ ինչ գիտաւո-
րութիւններու պատճառաւ 1684
ին զայն կը թողու: 1866ին սոս-
կումով կը դիմէ պաշտօնացւոց
արշաւանք, եւ կը դողայ որ հոն
մնալ չ'մտադրեն, ուստի պար-
տաւրին դրամ կը հալթայթէ պա-
տերազմի տուգանքի վճարումը
գիւրացնելու եւ թէթուանք մէկ
ժամառաւ պարպելու համար:

Անգլիա ոչ միայն չկրնար նե-
րել որ ծիպրալթալթի ամբողջութիւն-
ներուն դէմ՝ կանգնին այնպիսի
թնդանութիւն որոնք թերեւ օր
մ'իրեն դէմ փակեն Սուէճիլ եւ
Հնդկաստանի ճամբան, այլ մի-
անգամայն որովհետեւ Մարոքի
արտածութեան եւ ներաբերու-
թեան երկու երկրորդ մասն այսօր
իւր ձեռքը կը կառարուի՝ կ'ու-
զէ եւ կ'աշխատի որ իրայ նախնի
վիճակը պահէ միշտ: Ուստի հոն
այն բաւած քաղաքականութիւն
պատկանէ, յի մինչեւ անգամ
կ'ըզուի թէ նոր նոր բարեփո-
խութիւններու արդիւր կը հան-

